Հավելված N 5
ՀՀ կառավարության 2011 թ.
մարտի 24-ի նիստի N 11
արձանագրային որոշման

**ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ՉԱՐՈՐԱԿ ՆՈՐԱԳՈՅԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ**

| Նպատակներ և գործողություններ | Կատարման ժամանակացույցը | Ակնկալվող արդյունքն ըստ յուրաքանչյուր նպատակի և գործողության | Պատասխանատու | Ակնկալվող ֆինանսական միջոցներ | |
|---|---|---|---|---|---|
| | | | | Գումարը (հազ. դրամ) | Հնարավոր աղբյուրը |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | |
| 1. Ուռուցքաբանական ծառայության արդիականացում | | | | | |
| 1) Իրականացնել հանրապետության ուռուցքաբանական բուժհաստատությունների արդի վիճակի և նրանց նյութատեխնիկական ապահովվածության վերաբերյալ տվյալների փաստագրում: | 2012 թ. | 1) հանրապետության ուռուցքաբանական բուժհաստատությունների արդի վիճակի և նրանց նյութատեխնիկական ապահովվածության վերաբերյալ տվյալների փաստագրում: | ՀՀ առողջապահության նախարարություն | 1 ) Ֆինանսավորում չի պահանջում | - |
| 2) Մշակել և ՀՀ առողջապահության նախարարի հրամանով հաստատել չարորակ նորագոյացությունների (ըստ առանձին տեղակայումների) վաղ հայտնաբերման, կանխարգելման և բուժման իրականացման ծրագիր: | 2012թ.թ | Չարորակ նորագոյացությունների (ըստ առանձին տեղակայումների) վաղ հայտնաբերման, կանխարգելման և բուժման ծրագիրը ՀՀ առողջապահության նախարարի հրամանով հաստատվել և | ՀՀ առողջապահության նախարարություն | 2) Ֆինանսավորում չի պահանջում | - |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **3) Ուռուցքաբանական ծառայության մատչելիության ապահովման և առավելագույնը հիվանդներին մոտեցնելու նպատակով, ՀՀ Սյունիքի և Գեղարքունիքի մարզային հիվանդանոցերում նախատեսնել 10-ական մահճակալով բաժանմունքներ՝ հիվանդների քիմիաթերապևտիկ բուժման ապահովման համար:** | **2013– 2015 թթ.** | **համակարգում ներ է դրվել:**<br><br>**3) ՀՀ Սյունիքի և Գեղարքունիքի մարզային հիվանդանոցերում ծավալվել են 10-ական մահճակալով քիմիաթերապևտիկ բաժանմունքներ:** | **ՀՀ առողջա-պահության նախարա-րություն** | **3) 89 միլիոն դրամ (որը համարժեք 243836 ԱՄՆ $)**<br>(կապիտալ 100.000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ՝ տարածքի վերանորոգման համար: Քանի որ 10 մահճակալանոց բաժանմունքի ծավալման համար անհրաժեշտ է շուրջ 200 քմ վերանորոգում, իսկ յուրաքանչյուր 1քմ կապիտալի( 500 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ: Մեկ բաժանմունքի կահավորման համար կապիտալի 22.000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ: Վերածելով դրամի՝ 1 բաժանմունքի համար պահանջվող գումարը կկազմի շուրջ 44.5 միլիոն դրամ է: | **Պետա-կան բյուջե,** |
| **4) Վերազինել հանրապետության ուռուցքաբանական ծառայություն իրականացնող բուժհաստատությունների նյութատեխնիկական բազան՝ հագեցնելով դրանք նորագույն ախտորոշիչ և բուժական նշանակության սարքավորումներով,** | **2014 – 2018թթ.** | **4) Ուռուցքաբանական ծառայություն իրականացնող բուժհաստատություններն ապահովված են անհրաժեշտ սարքավորումներով:** | | **4) 580 միլիոն դրամ**<br><br>Ըստ ՀԲ ծրագրի փորձի՝ անհրաժեշտ կլինեն շուրջ 1.6 միլիոն դոլար՝ սարքավորումներ գնելու համար (այդ թվում՝ համակարգչային տոմոգրաֆ, մամոգրաֆներ, սոնոգրաֆներ). Որի արժեքը դրամի վերածելով ստացվում է: | **Պետա-կան բյուջե,** |
| **2. Ուռուցքաբանական ծառայության մասնագետների կրթում** | | | | | |
| **1) Պետական պատվերով կլինիկական օրդինատուրայի** | **2013 - 2014 թթ.** | **1) Կլինիկական օրդինատուրայի** | **ՀՀ առողջապահությ** | **1) 50 միլիոն դրամ** | **Պետա-կան** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **տեղերի ավելացում՝ բժիշկների ուսուցում** | | **տեղերի ավելացումն իրականացվել է և բժիշկների ուսուցման գործընթացը սկսվել է:** | **ան նախարարություն** | Ուսուցանվելու են 115 մասնագետներ: (Հաշվարկը կատարվել է ելնելով մեկ մասնագետի ուսուցման համար անհրաժեշտ ֆինանսավորումից՝ ամսեկան 18000 դրամ, երկու տարվա ուսուցման հաշվարկով կպահանջվի մեկ մասնագետի համար 432000 դրամ): | **բյուջե** |
| **2)** Միջուկային բժշկության մասնագետների վերապատրաստում, այդ թվում արտերկրում | 2014-2015թթ. | **2)**Միջուկային բժշկության մասնագետները վերապատրաստվել են: | ՀՀ կրթության և գիտության նախարարություն (համաձայն ՀՀ կառավարության 07.10.2010թ. N1424-Ն որոշման 5-րդ կետի) ՀՀ առողջապահության նախարարություն Հայաստանի Ազգային մրցունակության հիմնադրամ/համաձայնությամբ/ | 2**)37,125 միլիոն դրամ (որը համարժեք է 75000 Եվրո)**<br>(5 մասնագետի վեցամսյա գործուղման հաշվարկով, յուրաքանչյուր մասնագետի համար պահանջվող ամսեկան գումարը 2500 Եվրո) | Պետա-կան բյուջե |
| 3)Ռադիոքիմիկոսների, ցիկլոտրոնի շահագործման օպերատորների և ճարտարագետների վերապատրաստում տեղում և արտասահմանում | 2014-2015թ.թ. | 3) Ռադիոքիմիկոսները, ցիկլոտրոնի շահագործման օպերատորները և ճարտարագետները վերապատրաստված են տեղում և արտասահմանում | 3) ՀՀ կրթության և գիտության նախարարություն (համաձայն ՀՀ կառավարության 07.10.2010թ. N1424-Ն որոշման 5-րդ կետի) ՀՀ առողջապահությ | 3) 49 միլիոն դրամ (որը համարժեք է 99000 Եվրո8 վերապատրաստման ծրագրերի հաշվարկով, մեկ ծրագրի միջինացված գումարը 12375 Եվրո | Պետա-կան բյուջե |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | ան նախարարու-<br>թյուն<br>Հայաստանի<br>ազգային<br>մրցունակության<br>հիմնադրամ<br>/համաձայնությա<br>մբ/ | | |
| **3. Ուռուցքաբանական ծառայության ֆինանսավորման համակարգի բարելավում** | | | | | |
| **1) Ուռուցքաբանական ծառայության գործող ֆինանսավորման համակարգի վերանայում, ֆինանսավորման մեխանիզմների կատարելագործում:**<br><br>**2) Ուռուցքաբանական ծառայության մասնագետների (բժիշկներ, բուժքույրեր, ռադիոլոգներ, տեխնիկներ) նոր վարձատրման համակարգի մշակում և ներդրում:** | **2013 – 2014 թթ**<br><br>2014-2015թթ. | **1) Ուռուցքաբանական ծառայությունը ֆինանսավորվում է նոր սկզբունքով և կատարելագործված մեխանիզմով:**<br><br>**2) Ուռուցքաբանական ծառայության մասնագետների (բժիշկներ, բուժքույրեր,** | **ՀՀ Առողջապահու - թյան նախարարություն** | **Տվյալ բյուջետային տարվա <<ՀՀ պետական բյուջեի մասին>> օրենքով` սոցիալական հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների համար նախատեսված հատկացումների սահմաններում:**<br><br>**Ֆինանսավորում չի պահանջվում** | **Պետա -կան բյուջե**<br><br>**---** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3) Միջուկային բժշկության կիրառմամբ մատուցվող բժշկական ծառայությունների փոխհատուցման համար պարտադիր բժշկական ապահովագրության ծրագրի մշակում, եթե մինչ այդ համակարգում չի ներդրվել պարտադիր բժշկական ապահովագրությունը: | | **ռադիոլոգներ, տեխնիկներ) վարձատրվում են նոր համակարգով:**<br>**3)** Միջուկային բժշկության կիրառմամբ մատուցվող բժշկական ծառայությունների փոխհատուցման համար պարտադիր բժշկական ապահովագրության ծրագիրը մշակված է: | **3)** ՀՀ առողջապահու-թյան նախարարություն Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամ/համաձայնությամբ/ | Ֆինանսավորում չի պահանջվում | |
| **4. Ուռուցքաբանական ծառայության ոլորտը կարգավորող նորմատիվների մշակում և ներդրում** | | | | | |
| **1) Ուռուցքաբանական ծառայության իրավա–նորմատիվային դաշտի ստեղծում:** | **2012 – 2014 թթ** | **1) Ստեղծվել է ուռուցքաբանական ծառայությունը կարգավորող իրավա–նորմատիվային դաշտ:** | **ՀՀ առողջապահության նախարա–րություն** | **Ֆինանսավորում չի պահանջվում** | |
| **5. Ուռուցքաբանական ծառայության որակի բարելավում և մշտադիտարկում** | | | | | |
| **1)Ուռուցքաբանական ծառայության և ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայությունների փոխհամագործակցություն և հետադարձ կապի ապահովում**<br><br>**2) Ծառայության գործունեության** | **2013 – 2014 թթ .** | 1)Ուռուցքաբանական ծառայության և ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայությունների փոխհամագործակցություն և հետադարձ կապը կայացել է, առնվազն 20% -ով պակասել է <<բարձիթողի> դեպքերի թիվը: | ՀՀ առողջա-պահության նախարա-րություն | **Ֆինանսավորում չի պահանջվում**<br><br>**2) 3,6 միլիոն դրամ** | **1)Պետական բյուջե**<br><br>**2)** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **արդյունավետության բարձրացման նպատակով որակի չափորոշիչների մշակում և համակարգում ներդրում:**<br><br>**3) Հանրապետության մարզերի բնակչությանը որակյալ անհետաձգելի բուժօգնության ապահովում արտագնա ուռուցքաբանական խմբերի միջոցով**<br><br>**5)** Ուռուցքաբանության ոլորտում իրականացվող բուժօգնության և մատուցվող ծառայությունների որակի բարելավման նպատակով ձևավորել <<Ուռուցքաբանության գերազանցության հայկական կենտրոնի>> և միջուկային բժշկության ոլորտում առաջատար միջազգային առաջատար կառույցների հետ գործընկերություն | **2013-2017թթ** | 2) Ծառայության գործունեության արդյունավետության բարձրացրացել է<br><br>3) Հանրապետության մարզերի բնակչությանը որակյալ անհետաձգելի բուժօգնության ապահովում արտագնա ուռուցքաբանական խմբերի միջոցով<br><br>5) Ուռուցքաբանության գերազանցության հայկական կենտրոնի և միջուկային բժշկության ոլորտի զարգացման նպատակով միջազգային առաջատար կառույցների հետ գործընկերությունը ձևավորված է | ՀՀ Առողջապա-հության նախարա-րություն<br><br>ՀՀ առողջապա-հության նախարա-րություն<br><br>ՀՀ առողջապա-հության նախարարու-թյուն Հայաստանի ազգային մրցունակու-թյան հիմնադրամ/ համաձայնու թյամբ/ | Որակի չափորոշիչների մշակման. համակարգման և ներդրման համար կպահանջի 3,6 միլիոն դրամ (Աշխատանքային խմբի ստեղծում՝ 3 մասնագետ, 6 ամսվա աշխատանք, ամսական 200.000 դրամ աշխատավարձ):<br><br>**3) 91,25 միլիոն դրամ**<br>(Անհրաժեշտ կլինի ունենալ 1 ավտոբուս (100.000 $), հագեցած շարժական ռենտգենով, մամոգրաֆով, սոնոգրաֆով (145.000 $) և 3 մասնագետների վարձատրություն՝ ներառյալ օրապահիկ՝ 2000 դրամ և գիշերավարձ՝ մինչև 15.000 դրամ (3-օր յուրաքանչյուր մարզում*10 մարզ տարեկան, ընդամենը՝90 օր):<br><br>5)12,4 միլիոն դրամ (որը համարժեք է 25000 Եվրո)<br><br>5 տարվա ընթացքում արտասահմանյան փորձագետների այցելություն տարեկան 10 օրվա հաշվարկով, 1 օրվա արժեքը 500 Եվրո | **Պետական բյուջե**<br><br>**3) Պետական բյուջե**<br><br>**Պետական բյուջե** |
| **6.Ուռուցքաբանության ոլորտում համաճարակաբանական հսկողության իրականացում** | | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1) Համաճարակաբանական հսկողության համակարգի մշակում և ներդնում: | 2012-2018 թթ . | 1)Համաճարակաբանական հսկղության համակարգը մշակվել և ներդրվել է: | ՀՀ առողջապահության նախարարություն | Ֆինանսավորում չի պահանջում | - |
| 2) Իրականացնել բժշկահիգիենիկ գիտելիքների ուսուցում և առողջ ապրելակերպի քարոզչություն բնակչության շրջանում՝ ռիսկի գործոնների ամրապնդման և այդ գործոնների դիմակայման հնարավորությունների ուժեղացման, ինչպես նաև բարձրացնել բնակչության տեղեկացվածությունը քաղցկեղի անհատական կանխարգելման գիտելիքների և չարորակ նորագոյացությունների ախտորոշման ու բուժման արդի հաջողությունների վերաբերյալ: | | **2)** Բնակչության շրջանում իրականացվել է բժշկահիգիենիկ գիտելիքների ուսուցում և առողջ ապրելակերպի քարոզչություն | | 2) Հուշաթերթերի տպագրություն -1 944000 դրամ Պաստառներ-1 440 000 դրամ Տեսահոլովակ- 1 800 000 դրամ | **2)**Միջազգային դոնոր կազմակերպություններ |

*Հաշվարկը կատարվել է մեկ ԱՄՆ դոլարին համարժեք՝ 365 դրամ հաշվարկով